

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒՇԵՂ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայկական Մուշեղ անվան առավել տարածված ստուգաբանությունը պատկանում է Հրաչյա Աճառյանին: Խոսելով հայերենի վրա խեթական լեզուների ազդեցության մասին, ականավոր հայագետը տալիս է հետևյալ պարզաբանումը. «Ամենից ավելի հայերենին նման եմ համարում հաթերի Մուշիլի անունը՝ որով կոչվում են մի քանի թագավորներ: Դա մեր Մուշեղն է, որ ոչ մի մեկնություն չունի դեռ: Մուշիլի ձևի մեջ շ վերջավորությունը կամիսերեն եզակի ուղղականի նշանն է, որ համապատասխանում է սանս. -s լտ. us հուն. -os վերջավորությանց: Հստ որում պարզ ձևն է Մուշիլի, սա պիտի տար հայերեն Մուշիլ կամ Մուշեղ, և Ե ձայնի սովորական անկումով՝ Մուշեղ (հմմտ. քաշել > քաշել, պաշտել > պաշտել, խաշել > խաշել և այլն):

Մի այսպիսի հին ու «ազգային» հատուկ անվան փոխառությունը կամիսերենից՝ անշուշտ առանձին նշանակություն ունի, և ենթադրել է տալիս, որ նա մենակ չէ և ուրիշ նմաններ էլ պետք է ունենա»¹:

Հետագայում Մուշեղ անվան խեթական ծագման վարկածն իր պաշտպանության տակ առավ ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանը՝ փորձելով նաև այլ փաստերով հիմնավորել Աճառյանի տեսակետը. «Հատուկ անուններից, ... գրում է Գ. Ղափանցյանը, — ես կմատնանշեի խեթական երկու թագավորների՝ Մուշիլ (Muršil-iš) այրանունը, որը դեռ Հ. Աճառյանը ճիշտ կերպով կապակցեց մեր հայոց Մուշեղ անվան հետ: Այս բառն այնպիսի կազմություն ունի, ինչպես Խաթթուշիլ (Hattušil-iš), Բիաշիլ (Biašil-iš) թագավորանունները, որոնց հետ ես կհամեմատեի խուտիտանական (միտանյան) Աբունաշիլ, Միթրաշիլ աստվածությունները...»²:

Ինչ խոսք, հնչյունական տեսակետից խեթ. Մուշիլ — հայ. Մուշեղ զարգացումը միանգամայն հիմնավոր է և, ինչպես ցույց է տվել Հ. Աճառյանը, չի հակասում հայերենի հնչյունական օրինաչափություններին: Սակայն, վերը բերված բոլոր հիմնավորումներով հանդերձ, հայ. Մուշեղ անվան Աճառյանի առաջարկած բացատրությունը հենվում է բացառապես արտաքին նմանության վրա և չի հասնում նախնական կոնկրետ իմաստին: Այսինքն՝ ստացվում է, որ «հայկական անհայտը» փոխարինվում է «խեթական անհայտով», որը նշանակում է հատուկ անունների զուտ կառուցվածքային համեմատություն, որն ըստ էության, շատ բան չի ավելացնում մեր իմացածին: Ուշագրավ է, որ Աճառյանն ինքն էլ է մատնանշում նման «ազգային» հատուկ անվան կամիսերենից փոխառյալ լինելու արտառոցությունը, սակայն չունենալով այլ բացատրություն՝ Մուշեղ անունը բխեցնում է խեթական աղբյու-

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1940, № 1, էջ 149:

² Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 148—149:

րից: Իրականում հայ. Մուշեղ անձնանունը բնիկ հայկական է և իր կազմութամբ, դարգացման օրինաչափություններով ու նախնական իմաստով, հեշտությամբ բացատրվում է հայկական-հնդեվրոպական տարրերով: Մակայն այս հարցերի հանգամանալից քննությունն անցնելուց առաջ, նպատակահարմար է անդրադառնալ մի կարևոր փաստի ևս:

Իսպանական և բասկյան գիտական շրջանակներում շուրջ չորս հարյուրամյակ գերիշխում է այն տեսակետը, որ բասկերը հայերի մի շառավիղն են, ուստի և բասկերենն էլ ցեղակից է հայերենին: Այս կարծիքը բազմիցս վերարժաժվել է էլլիսի, Օշտիրի, Կարստի, Մառի և այլ գիտնականների ուսումնասիրություններում: Տպավորիչ են հատկապես բերվող լեզվաբանական զուգահեռները՝ շատ մեծ թվով բառային ընդհանրություններ և գրեթե նույնությամբ կրկնվող ջրանուններ ու լեռնանուններ, որոնք անհնար է բացատրել միայն փոխառությամբ: Սրանց պետք է ավելացնել նաև հայ-բասկյան ազգագրական, առասպելաբանական և այլ բնույթի բազմաթիվ նմանությունները, որոնց ուսումնասիրման ուղղությամբ վերջին մի քանի տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել³:

Արդ, եթե հայ-բասկյան ցեղակցության վարկածը բավարար հիմքեր ունի, և բասկերենն էլ իր հերթին մոտ է կանգնած հայերենին, ապա հայերեն բառերի, այդ թվում նաև հատուկ անունների, ստուգաբանության գործում կարելի է ներգրավել բասկերեն նյութը: Նման մոտեցումն առավել ևս հիմնավորված կլինի, քանի որ, ինչպես կտեսնենք, շատ դեպքերում բասկյան բառաձևերը հայկականներից գրեթե ոչնչով չեն տարբերվում: Այլ կերպ ասած, հանձինս բասկերենի, հայագիտությունն այսօր ունի զորեղ մի դաշնակից, որը կարող է նպաստել բազմաթիվ առեղծվածների լուսաբանմանը:

Գանք, այժմ, հայ. Մուշեղ անվան մեկնությանը: Մեր կարծիքով, հայկական Մուշեղ անձնանունը ներկայացնում է զուտ հայկական կազմություն և բաղկացած է հայ. մուրց «բուռնցք» բառից և -եղ վերջածանցից՝ «առատ ունենալ» իմաստով (հմմտ. հյուսթ-եղ «առատ հյուսթ ունեցող», այլև գուն-եղ, ձայն-եղ, մարմն-եղ, քիկն-եղ և այլն): Այսինքն՝ մենք ենթադրում ենք, որ Մուշեղ անվան հին ձևն եղել է մուրց-եղ «մուրց, բուռնցք ունեցող», որից էլ՝ մուշեղ և Մուշեղ: Եվ քանի որ այս ստուգաբանությունն առաջ է բերում այլ կարգի դժվարություններ, նպատակահարմար է առկա նյութը բաժանել մի քանի մասի՝ ըստ հնարավորին վերացնելով առերևույթ հակասությունները:

1. Հայ. մուրց «բուռնցք» բառի ծագումը հայտնի չէ. 2. Աճառյանը բավարարվում է միայն գոյություն ունեցող ստուգաբանական առաջարկները թվարկելով՝ առանց դրանցից որևէ մեկը պաշտպանելու⁴:

2. Բասկերենում հայ. մուրց «բուռնցք» բառի բացարձակ զուգահեռն է murtzi (հնչում է՝ մուրցի) հոմանիշը՝ հենց «բուռնցք» իմաստով: Այս բացարձակ նույնականությունն առաջինը նկատել է գերմանացի հայագետ Յոզեֆ Կարստը⁵:

3. Հայերենում գոյություն ունի նաև մուշտ (մուշտի, մուշտայ, մուշտու տարբերակներով) բարբառային բառը՝ նույնպես «բուռնցք» իմաստով, որ Ստ. Մալխասյանցը կցում է պահլ. must հոմանիշին⁶:

³ Այս հարցերի մասին տե՛ս հայ-բասկյան գիտամշակութային «Արաքս» հանդեսը, 1993—94 թթ.:

⁴ Լ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, հ. 2, էջ 365:

⁵ Joseph Karst, Alarodiens et Proto-Basques, Vienne, 1928, p. 43.

⁶ Ստ. Մալխասյանց, Հայերեն քաղաքական բառարան, Երևան, 1944, հ. 3, էջ 364:

4. Բասկերենում գործում է $rtz > st$ հնչյունափոխության օրենքը, որը հաստատվում է բազմաթիվ օրինակներով՝ *bertze—beste* «ուրիշ», *bortz—bost* «5», *hertze—heste* «աղիք» և այլն⁷:

5. Որոշակի արդյունավետության օրենքը զանազան դրուկումներով գործում է նաև հայերենում, ինչպես ցույց են տալիս հեռակալ զուգահեռ տարբերակները՝ կուրծ—կուշտ «կող», կորդ—կոշտ «խոպան, անմշակ հող», խորշակ—խոշտակ «տաք քամի», որցել—սստեել «ցատկել», հարս (<հարց)—աստել «ամուսնության համար աղջիկ ուզել» (իմա՝ հարց-ան-ել) և այլն: Այս օրինաչափություններից հետևում է, որ հայ. բարբառային մուշտ «բուսնեցք» բառը գրաբարյան մուրց հոմանիշի հնչյունափոխված տարբերակն է՝ մուրց—մուշտ անցմամբ: Սրանից բխում է նաև, որ իրանական *mušt* ձևը, եթե սեփական կազմություն չէ (այս մասին տես ստորև), պետք է համարվի հայերենից փոխառյալ և ոչ թե հակառակը:

6. Բասկերենի հնչյունաբանության կարևորագույն օրենքներից է այսպես կոչված *m* ռնգային պայթյալի հետագարձ ճեղքումը: Բասկագիտության մեջ տարածված է այն կարծիքը, որ հնում բասկերենը չի ունեցել ռնգային *m* հնչյունը. այն առաջացել է հետագայում *n* և *b* հնչյունների միաձուլման հետևանքով՝ $nb > mb > m$: Նման եզրակացության համար հիմք է հանդիսացել, մասնավորապես, աքվիտանական արձանագրություններում որպես անձնանունների բաղադրիչ հանդես եկող *Sembe* բառը, որը, ինչպես ենթադրվում է, բասկերենում պահպանված *seme* «որդի» բառն է՝ $sen-be > seme$ անցումով: Բասկերենում այս հնչյունափոխությունը շատ տարածված է, ինչպես ցույց են տալիս իսպաներենից կատարված փոխառությունները՝ իսպ. *ambición*— բասկ. *amizione* «հավակնություն», իսպ. *embudo*— բասկ. *imitu* «ձագար», իսպ. *invención*— բասկ. *imintziona* «հնարանք» և այլն⁸:

7. Առհասարակ $nb > m$ անցումն անսովոր երևույթ չէ և տարածված է զանազան լեզուներում: Գիտնականները սրան տարբեր անուններ են տալիս՝ *r*-ի ռնգայնացում, առնմանում և այլն: Խոսելով այս երևույթի մասին Հ. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Վ-ից հետո *r* ընկնում է. ինչպես Կիլիկիայի բարբառում՝ *ձեռամբ—ձեռոմ* և այլն. այսպես է հույն բարբառներում՝ $mb > m$... նկատելի է, որ այս ձայնափոխությունը հունարենում էլ տեղի ունի Կապադովկիայի բարբառում: Միրամբիլը $mb > m$ տարօրինակ գտնելով՝ կասկածում է, որ դա մի օտար ազդեցության արդյունք չէ⁹: Սակայն բացի Կիլիկիայի բարբառից, նր > մ հնչյունափոխությունը գործել է նաև գրաբարում, կարելի է ասել՝ համատարած կերպով: Այսպես, եթե փորձենք մ ռնգային պայթյալի հետագարձ ճեղքման օրենքով դիտարկել հայ. *ամ—ալ* «լցնել» բառը, ապա կտեսնենք, որ սրա հին ձևը պետք է լիներ կամ *ամբ—ալ* կամ *անպ—ալ*. վերջիններս հեշտության փորձ են կցվել հայ. *ամպ* (*ամբ*) բառին: Նույն կերպ էլ քննելով հայ. *խում* (*խմել*) բառի կազմությունը, կարող ենք նկատել, որ *խում* բառի նախաձևն է *խումբ* կամ *խումպ*, որն էլ համապատասխանում է հայ. *ումպ* հոմանիշին՝ *ումպ > խում*:

8. Այդ նույն շափանիչներով ժոտենալով հայ. *մուրց* և բասկ. *murtzi* բացարձակ զուգահեռների ստուգաբանությանը, կարող ենք նկատել, որ դրանցում նախաձայն մ-ն ն և բ հնչյունների միաձուլման արդյունք է, ուստի հայ. *մուրց* բառի համար կարելի է վերականգնել **անբուրցի* նախաձևը:

⁷ Luis Michelena, *Fonética histórica vasca*, San Sebastian, 1960, p. 362—64.

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 357—358:

⁹ Հ. Աճառյան, Լիակատար քերականությունը Քաջոց լեզվի, հ. 6, էջ 626—627:

Սրա բուր արմատը նույնն է հայ. բուռն «բուռնցք» բառի հետ, որը գալիս է հնդեվրոպական *bhor «բերել» արմատից:

9. Ակադեմիկոս Գ. Բ. Զահուկյանը հ.-ն. *bhor նախաձևը համարում է *bher «բերել» արմատի ձայնդարձը¹⁰, որից՝ բեր-եմ, սանս. bhar, զնդ. barami գոթ. bairan լատ. fero «բերել» և այլն¹¹; Հայերենում բեր «բերել» արմատից է ծագում բերրի «արգասավոր» բառը, որը լատիներեն զուգահեռն է fertilis «բերրի»: Բասկերենում սրանց համապատասխանն է berri բառը, որի բուն իմաստն է «նոր»:

10. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ձեռք» և «ուժ» իմաստներն իրարից անբաժան են (հմմտ. հայ. բուռն «բուռնցք» և «ուժգին, սաստիկ»), կարելի է հայ. բուռն «բուռնցք» բառին կցել նաև լատ. fortis «ուժ», ռուս. борьба «պայքար», հին հնդկ. bhurni «ուժգին, կատաղի», հուն. formos «իրարանցում» տարբերակները: Այդ դեպքում կստանանք հետևյալ զուգահեռ շարքերը. հայ. բեր-եմ—բուռն, լատ. fertilis «բերրի»— fortis «ուժեղ», ռուս. бер-у «վերցնել, борьба «պայքար», սանսկ. bhar «բերել»— հին հնդկ. bhurni «ուժգին», հուն. fero «բերել»— formos «իրարանցում»:

Հնդեվրոպական բառաձևերի այս շարքը լրացնում է նաև բասկերենը՝ borroka «կոխվ, պայքար», որը բերված հանգամանքների հաշվառումով, կարող է համարվել berri «նոր» բառի ձայնդարձը:

11. Ելնելով հնդեվրոպական նախալիզվում *bher և *bhor ձևերի առկայությունից, կարող ենք ենթադրել, որ գոյութուն է ունեցել նաև սրանց ստորին ձայնդարձը՝ *bhar: Այս վարկածը հաստատվում է ինչպես սանս. bhar, հին պարս. barantiy, զնդ. barami «բերել», պհլ. baram «տանել» բառաձևերով, այնպես էլ հայ. բերրի և բարի զուգով (հմմտ. բերբ և բարբ): Սրանք բասկերենում ունեն իրենց ձայնդարձային համապատասխանները՝ berri և barri «նոր»:

Այս համեմատություններն ունեն իրենց օգտին խոսող այլ կովաններ, որոնք նույնպես կներկայացվեն ստորև:

Այսպիսով, մենք պարզեցինք, որ հայ. մուրց «բուռնցք» բառը պարունակում է բուր արմատական տարրը՝ հենց «բուռ» իմաստով, ուստի մեզ մընում է պարզել մուրց բառի համար ենթադրելի *ան-բուր-ց նախաձևի ան- և -ց բաղադրիչների ծագումը:

12. Նախ փորձենք պարզել ձեռք և բուռն բառերի իմաստային փոխհարաբերությունը: Նկատելի է, որ ձեռք բառի արտահայտած իմաստը շատ ընդհանուր է՝ «ձեռք», մինչդեռ բուռն հոմանիշն ունի առավել կոնկրետ նշանակում՝ «ձեռքի ափը և թաթը միասին»: Այսինքն՝ բուռ բառն իր մեջ պարունակում է ոչ միայն «ձեռք» իմաստը, այլև ձեռքի ափի և թաթի ամբողջության կամ միասնության գաղափարը: Եվ հենց այս «ամբողջության» իմաստն էլ, մեր կարծիքով, ընկած է հայ. մուրց բառի կազմության հիմքում:

13. Հայերենում շատ գործածական է ան- կամ հան- նախամասնիկը՝ «բոլորը, ամբողջ» իմաստով: Հ. Աճառյանի կարծիքով սրա հետ նույնն է նաև համ- զուգահեռ ձևը՝ համայն, համասփյուռ, համեց և այլն¹²; Այս ան (հան) մասնիկն ի հայտ է գալիս բազմաթիվ կազմություններում՝ հանուր, «բոլոր, ամեն տեղ», հանդիպ, հանդիպել, հանգչտ և այլն: Միևնույն ժամա-

¹⁰ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Ախագրայից ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 116:

¹¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. 1, էջ 441:

¹² Նույն տեղում, Բ. 3, էջ 18:

նակ ան (հան) նախամասնիկը հայտնվելով Բ ձայնեղ պայթականից առաջ՝ վերածվում է ամ-ի կամ համ-ի, ինչպես օրինակ՝ հան-բերել և համբերել, հան-բառնալ և համբառնալ, ան-փոփ և ամփոփ և այլն: Անշուշտ, բացառված չէ, որ հայ. համ(ա) նախամասնիկն ունենա այլ ծագում և կապ շունենա բերված օրինակների հետ, որոնցում ակնհայտորեն գործել է նր>մ անցումը:

Արդ, հայ. ան- «բոլորը, ամբողջ» նախամասնիկը գործածվելով բուռ (բուր) և բար (բառ) ձայնդարձներից առաջ, ծնունդ է տվել մի շարք հոմանիշ ձևերի, որոնցից նշենք հետևյալները.

— ամուր «գորեղ, հաստատուն, պինդ». *ան-բուր «ամբողջ ձեռք» կազմությունն է՝ անբուր>ամուր անցմամբ (հմմտ. հայ. բուռն «սաստիկ, ուժգին»).

— համուռ, համուռն «խումբ, բազմություն» (հմմտ. միահամուռ «միախումբ, ամբողջը միասին»). անշուշտ, դալիս է հան-բուռն «ամբողջ բուռն» կառուցվածքից՝ հանբուռ>համուռ.

— յամառ «համառ, պնդաճակատ». նախնական իմաստը պետք է որ լինի «ուժեղ», ուստի կարող է բացատրվել *ի ան-բառ «ամբողջ ձեռք» կազմությամբ՝ դառնալով ամուր-ի ձայնդարձը.

— համար «թիվ, գումար, հաշիվ». Սկզբնական նշանակումը կապված է եղել «շատ, բազմաթիվ» գաղափարի հետ, որը հաստատվում է նաև բառիս կազմությամբ՝ *հան-բար «ամբողջ ձեռք» (իմա՝ «շատ, բազմաթիվ, առատ»):

14. Հայերենում նր>մ զարգացումը գալիս է անհիշելի ժամանակներից և գործել է բացառիկ արդյունավետությամբ: Այդ է վկայում, մասնավորապես, վանյան Kullimmeri տեղանունը, որը ճշտիվ համապատասխանում է հայկական *կողին—բերի կառուցվածքին՝ «բերրի գավառ» իմաստով: Հավանաբար, նույն կազմությունն ունի նաև սեպագիր շրջանի Amurru տեղանունը, որը հեշտությամբ կարող է կցվել հայ. ամուր բառին՝ իբրև *ան-բուրու «ամբողջ բուռ»:

15. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվականների կազմության համար հիմք են հանդիսացել մարդու մատները, մենք ենթադրում ենք, որ բասկ. bortz «5» բառի ծագումը կապված է հայ. բուռն (բուր) բառի հետ՝ որպես հինգ մատների ամբողջությունը: Այս վարկածի օգտին է խոսում բասկերենում bortz և host «5» կրկնակ ձևերի գոյությունը (հմմտ. հայ. մուրց և մուշտ «բոունցք»):

16. Հետագայում, հայերենի նման, բասկ. bor-tz «5» բառը ստանալով an- «ամբողջ, բոլորը» նախամասնիկը, դարձել է amar (hamar), որի իմաստն է «10»: Այսինքն՝ բասկ. hamar «10» թվականը նույնն է հայ. համար «թիվ» բառի հետ և բառացի նշանակում է «ամբողջ բուռ»՝ անշուշտ, նկատի ունենալով երկու ձեռքերի բոլոր մատների ամբողջությունը:

17. Բասկերենում գործում է r-j (r-j) հնչյունափոխությունը՝ ari-ai «մի բան անելիս լինել», *hari-hai «ընթացք, ժամանակ», hire-hie «քո» և այլն, որ լուիս Միչելենան բացատրում է իբրև r-ի անկում՝ անցնելով j-ի միջով¹³:

Այս օրինաչափությունը բնորոշ է նաև հայերենին, ինչպես ցույց են տալիս բասկերեն-հայերեն հետևյալ զուգահեռ շարքերը.

— բասկ. argi «լույս» — egu (<aygu) «օր»

— հայ. արեգ(ի) «արև» — այգ «լուսաբաց» — էգուց «վաղը»:

Սրանց կարելի է ավելացնել նաև հայկական էգ բառի հնչյունական զարգացումը՝ արգ-անդ>այգի>էգ:

¹³ Լ. Միչելենա, Աշխ. աշխ., 828:

18. Բասկերենին և հայերենին բնորոշ *r-յ* անցման օրենքով դիտարկելով հայ. համայն «ամբողջ, բովանդակ» բառը, նկատում ենք, որ սրա հին ձևը եղել է համարէն, *ախինքն*՝ *հան-բար-էն «ամբողջ բոով»: Միևնույն ժամանակ, հայ. համայն բառն էլ վերլուծելով կուխ Միշելենայի ասած *յ-ի* անկման տեսանկյունից, տեսնում ենք, որ արդյունքում ստացվում է համան կամ համէն ձևը, որն էլ հայերենում շատ տարածված ամէն բառն է՝ «բոլոր» իմաստով:

19. Բոլոր այս վերլուծությունները ցույց են տալիս, որ հայ. մուրց «բրունցք» բառի մուր բաղադրիչը ծագում է ան- «ամբողջ» և բուր «բուռ» տարրերի միաձուլումից՝ անբուր—անմուր—ամուր—մուր անցումներով և բառացի նշանակում է «ամբողջ բուռ»: Չեռքի տակ ունենալով այս կարևորագույն եզրահանգումը, կարող ենք անցնել հայ. մուրց բառի վերջածայն *ց-ի* պարզաբանման հարցին:

20. Բասկերենում *murtzi* «բրունցք» (հնչում է մուրցի) և *bortze* «5» (հնչում է բորցե) բառերը ցույց են տալիս, որ հայ. մուրց բառը պատկանելիս է եղել ի հոլովման՝ մուրց-ի: Այդ է վկայում նաև բրբ. մուշտի ձևը՝ մուշտայ և մուշտու տարբերակների կողքին: Այսպիսով, հայ. մուրցի բառից առանձնացնելով -ցի վերջածանցը, այն կարող ենք կցել հայ. տի (տէ) մասնիկին՝ «մեծ» իմաստով (հմմտ. տի-կին, տի-եգբբֆ և այլն): Ծիշտ է՝ տի (տէ) մասնիկի քմայնացումից սպասելի էր ծի (ծե), սակայն տվյալ դեպքում տի-ն ավելացել է ոչ թե մուր, այլ մուռ (ան-բուռ) ձևի վրա, որից առաջացել է նախ *մուրթի և ապա՝ մուրցի:

Այս վերականգնումների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ հայ. մուրց(ի) բառի նախնական նշանակումը եղել է «ամբողջ մեծ ձեռք» կամ «ամբողջ մեծ բուռ»՝ ան «ամբողջ», բուռ «բուռ» և տի «մեծ»:

21. Իմաստային այս վերականգնումը շի հակասում նաև բասկերենի տրվյալներին: Բասկերենում գոյություն ունի -te վերջածանցը՝ «առատ, շատ» իմաստով՝ *ur-te* «չրհեղել» (*ur* «չուր» և -te «առատ, շատ»), *legor-te* «երաշտ» (*legor* «չոր» և -te «շատ») և այլն: Սրա մեկ այլ տարբերակն է -ti վերջածանցը՝ «ամբողջություն, խումբ» իմաստով՝ *ariz-ti* «կաղնուտ» (*haritz* «կաղնի» և -ti «շատ»), *sagas-ti* «խնձորուտ» (*sagar* «խնձոր» և -ti «շատ») և այլն¹⁴:

Սրանցից հետևում է, որ բասկ. *bortze* «5» բառը կարող է գալ **bor-te* նախաձևից՝ «մեծ բուռ» իմաստով, իսկ բասկ. *murtzi* «բրունցք» բառի նախաձևը կլինի **an-bur-ti* «ամբողջ մեծ ձեռք»:

22. Կազմությամբ և իմաստով բերված հայկական և բասկյան բառաձևերին առավել մոտ է կանգնած լատիներեն *fortis* «ուժ» բառը, որի համար կարելի է վերականգնել **bhor-ti-s* նախաձևը՝ «մեծ բուռ» իմաստով (հմմտ. նաև *fertilis* «բերրի»): Ընդամին, հայերենի ու բասկերենի նման, լատինական *fortis*-ը նորալատին լեզուներում ենթարկվել է քմայնացման՝ ֆր. *force*, իսպ. *fuereza* «ուժ» և այլն:

23. Վերը նշված տի (տէ) «մեծ» մասնիկը հնդեվրոպական ծագում ունի, բացի հայերենից (տի-կին, տի-եգբբֆ) և լատիներենից՝ *fortis*, *ferti-lis*, այն պահպանվել է նաև լիտվերենում՝ *didis* «մեծ», և ռուսերենում: Ուշագրավ է հատկապես ռուս. *тысяча* «1000» բառը, որի համար մասնագետները վերա-

¹⁴ Plácido Mujika, Afijos vascos. Bilbao, 1982. pp. 65—67.

կանգնում են **ТЫ-СЯЧА** բաղադրիչները՝ «մեծ հարյուր» իմաստով (**ТЫ** «մեծ» և **СЯЧА-СТО** «100») ¹⁵:

24. Այսպիսով պարզվեց, որ հայ. մուրց «բռունցք» բառն ամբողջությամբ հնդեվրոպական ծագում ունի և գալիս է *ան-բուր-տի նախաձևից, որ բուն յղանակում է «ամբողջ մեծ բուռ»:

Այժմ անցնենք մուրց-եղ > Մուրեղ հնչյունափոխության հետ կապված հարցերի պարզաբանմանը:

Ինչպես տեսանք, հայերենին բնորոշ է **բ-**ի անկումը (հմմտ. ֆարշել— ֆաշել, խարշել—խաշել և այլն), որի հիման վրա Հ. Աճառյանը ենթադրում էր խեթ. Մուրշիլ > հայ. Մուրեղ անցումը: Եվ եթե հայ. Մուրեղ անվան համար մեր առաջարկած հնչյունական և իմաստային վերականգնումը ճիշտ է՝ մուրց-եղ «բռունցք ունեցող», ապա մուրց > մուր անցումը կարող է ունենալ իմաստային այլ ճյուղավորումներ ևս: Այս վարկածը հաստատվում է նաև մշակ «հողագործ, երկրագործ» բառով, որից՝ 1. մշակել «հողը վարել, հերկել», 2. «մատակարարել, տնտեսել», 3. «ծառայել, աշխատել»: Իմաստների այս բազմազանությունը կարող է բացատրվել, եթե ելնենք մշակ(ի) բառի *մուրց-ակի նախաձևից՝ սրան վերագրելով «ձեռքով մի բան անել» իմաստը: Այս վերականգնման օգտին է խոսում Զեյթունի բարբառի մուրոզ ձևը, որը պահպանել է մուրց բառի ու-ն, որը սղվել է գրաբարի մշակ տարբերակում:

Հրաշյա Աճառյանը հայ. մշակ բառը համարում է կովկասյան փոխառություն՝ վրաց. մուրա, մուրակի «գործավոր», մուրակոբա «աշխատանք», սամուրավո «աշխատանք», լագ. մուրա «բռնակիր», ինգ. մուրաբայ, մինգ. վիմուրատ, մուրեոբա, սվան. լիմշավ, լիմշաէ «աշխատել, աշխատանք» և այլն: Հենվելով կովկասյան լեզուներում գոյություն ունեցող զանազան հոմանիշների վրա, Հ. Աճառյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Ինչպես տեսնում ենք, բառը կա թե հյուսիսային և թե հարավային կովկասյան լեզուներում: Հայերենը կարող է մեկնվել -ակ մասնիկով, սակայն մշ-արմատը մեր մեջ գոյություն չունի, որ գտնվում է մուր, միշ, մշ ձևերով կովկասյան զանազան լեզուների մեջ և այն էլ ավելի ընդհանուր «աշխատանք, գործ» իմաստով, մինչդեռ հայերենի մեջ «երկրագործ» նույն գաղափարի մի մասնավոր առումն է միայն: Այս բոլորը ցույց է տալիս՝ որ բառը կովկասյաններից է անցած հայերենի և ոչ թե հակառակը» ¹⁶:

Սակայն, ինչպես տեսանք, հայ. մշակ բառի մուր բաղադրիչը կարող է գալ մուրց «բռունցք» ձևից, ուստի վերը բերված կովկասյան հոմանիշների ողջ շարքը կարելի է համարել հայերենից փոխառյալ: Ի դեպ, ճիշտ չէ հայ. մշակ բառը բաժանել մշ և ակ բաղադրիչների, ինչպես առաջարկում է Հր. Աճառյանը: Հայ. մշակ բառի սեռականը վկայվել է նաև մշակի ձևով, ուստի ավելի հիմնավոր է մուր-ակի բաժանումը՝ -ակի վերջածանցը կցելով հայ. (ա)կի եղանակավորող մասնիկին (կրկն-ա-կի, թեթև-ա-կի, հաճախ-ա-կի և այլն), որով մուր-ակի (մուրց-ակի) կազմության բուն իմաստը կդառնա՝ «բռով անելով» կամ «ձեռքով անելով»: Համապատասխան կազմություն է նաև հայկական մուրցացի (մուրց-ացի) «բռնցի, կոփելով, զարնելով» բառը:

Վերը բերված հանգամանքների հաշվառումով պետք է հայերենից փոխառյալ դնել նաև վրաց. բրձոլա «կոփվ, պատերազմ» բառը, որը կարող է գալ հայ. բուռձի (բուր-տի) «մեծ բուռ») կազմությունից (հմմտ. լատ. fortis

¹⁵ Н. М. Шанский и др. Краткий этимологический словарь русского языка, М., 1971, 457.

¹⁶ Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 335:

«ուժ» — ֆր. force): Հայ. ենթադրական *բուրցի տարբերակը, անցնելով բուր-
տի-բշտի օղակներով, պահպանվել է նաև մեր բարբառներում՝ բշտել, «հրել,
մխտել» իմաստներով. անշուշտ, սրա հետ նույնն է մշտել (մուշտ-ել) հոմա-
նիշը:

25. Հենվելով արդեն դիտարկված հնչյունական և իմաստային զարգաց-
ման օրինաչափությունների վրա, մենք ենթադրում ենք, որ մեզ հետաքրքրող
խմբին է պատկանում նաև հայ. մույր «մուրացկանութիւն» մուրացկանին
տրված ողորմութիւնը՝ բառը, որից՝ մուրալ, մուրանալ, մուրացիկ, մուրոլ
և այլն: Հր. Աճառյանը հենվելով միայն սողդ. mod «աղքատի տրված ողոր-
մութիւն» ձևի վրա, հայ. մույր բառը բխեցնում է իրանական աղբյուրից՝
չխոսելով բառիս սկզբնական իմաստի մասին¹⁷: Այս կապակցութեամբ նկա-
տելի է, որ «մուրալ» իմաստը կապված է ինչպես «առնել», այնպես էլ «տալ»
նշանակումների հետ, իսկ սրանք երկուսն էլ կարող են նախավոր «ձեռք,
բուռ» գաղափարի զանազան ճյուղավորումները լինել:

26. Հայ. մուրց (սեռ. մուրցո) «բռունցք» բառին կազմութեամբ նման է
մուրն (գրված նաև մուրջ) «մուրճ, կոան» բառը, որի ծագումը հայտնի չէ¹⁸:
Սակայն եթե նկատի ունենանք բռունցքի և մուրճի միջև նաև ֆիզիկական
նմանութիւնը, ապա կարող ենք ենթադրել, որ հայերենն այդ երկու երևույթի-
ները նշանակելու համար օգտվել է միևնույն կազմութիւնից՝ *ան-բուր-տի
«ամբողջ մեծ բուռ»: Հայ. մուրն բառի մուրջ գրութիւնը ենթադրում է *մուր-
դիո նախաձևը, որի դի-ո մասնիկը տի (թի) «մեծ» արմատի ձայնեղ տարա-
տեսակն է:

27. Թասկերենում հայ. մուրն բառի զուգահեռն է borra «մուրճ, կոան»,
որը մեր բուռ-ի կրկնակն է (հմմտ. նաև իսպ. porra «կոան», լատ. martulus
«մուրճ», marcus «կոան»), որը հանդես է գալիս առանց an «ամբողջ, բո-
լորը» նախամասնիկի, որն առկա է հայ. մուրն և լատ. martulus հոմանիշ
ձևերում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիտարկված փաստերը հնարավորութիւն են տալիս կատարել հետևյալ
ընդհանուր եզրակացութիւնները.

ա) Մուրեղ արական անձնանունը հայկական ծագում ունի և գալիս է
*մուրց-եղ նախաձևից՝ «մուրց, բռունցք ունեցող» իմաստով, և եթե խեթա-
կան Մուրշիլիշ ձևը կապ ունի հայ. Մուրեղ անվան հետ, ապա ենթադրելի է
կա՛մ հայերենից փոխառութիւն, կա՛մ էլ անկախ կազմութիւն՝ վերը նշված
հնդեվրոպական բաղադրիչներով:

բ) Առհասարակ «ձեռք» իմաստը նշանակող արմատները շատ հաճախ
են հանդիպում տարբեր լեզուների անձնանուններում, ինչպես օրինակ՝ պրս.
Փառնավազ «փառավոր բազուկ ունեցող», ռուս. Долгорукий «Երկայնաբա-
զուկ», հայ. Թաքուլ, Ձեռէս և այլն:

գ) Քանի որ հայ. Մուրեղ անվամբ հայտնի են եղել հիմնականում հայ-
կական իշխանական տների ներկայացուցիչները (հմմտ. նաև խեթական Մուր-
շիլիշ թագավորանունը), ապա Մուրեղ անվան *մուրց-եղ նախաձևի բուն ի-
մաստը կարող էր լինել ինչպես «ուժեղ» (իմա՛ «մուրց ունեցող»), այնպես
էլ՝ «առատաձեռն»: Երկու տարբերակներն էլ հավասարապես հնարավոր են:

¹⁷ Նույն տեղում, էջ 345, 364:

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

դ) Դիտարկված նյութի շրջանակներում հայերենին առավել մերձավորություն է ցույց տալիս բասկերենը, ընդամին այդ մերձավորությունը չի սահմանափակվում առանձին տարրերի նմանություններ, այլ հենվում է հնչյունական և իմաստային բազմաթիվ օրինաչափությունների վրա՝ վեր հանելով երբեմնի միասնական համակարգի ուրվագիծը:

ե) Հայ. Մուշեղ անվան ստուգաբանությամբ, բասկերեն նյութի ներգրավումով բացատրվում է նաև հայերեն մի շարք բառերի ծագումը (ամուր, մուրց, յամառ, քամար և այլն), որով ավելի է մեծանում մեր առաջարկած ստուգաբանական տարրերակի հավանականությունը:

В. Г. САРКИСЯН — Об этимологии армянского имени Мушег.—

В статье обсуждается возможность исконно армянского происхождения имени **Мушег**. Методом сопоставления различных индоевропейских языков, с вовлечением соответствующих форм баскского языка, автор приходит к выводу, что имя **Мушег** происходит от армянского слова **мурц** «кулак», которое в идентичной форме сохранилось и в баскском **мурци** «кулак». Такое толкование имени **Мушег** позволяет автору установить целый ряд фонетических закономерностей между армянским и баскским языками, благодаря которым объясняется происхождение многих армянских слов.